

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն աշխատանքային այց կատարեց Մարտունու տարածաշրջան

29.09.2015

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հերթական աշխատանքային այցը կատարեց Մարտունու տարածաշրջանի համայնքներում: Մարտունի քաղաքում մարզպետը դիտարկեց Վարդան Մամիկոնյան փողոցում պետական միջոցներով իրականացվող ասֆալտապատման աշխատանքները: Քաղաքապետ Բագրատ Հարությունյանը հավաստիացրեց, որ 420 գծամետր երկարության ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները, որոնք արդեն մոտենում են ավարտին, կատարվել են սահմանված ժամկետներում եւ որակով: Քաղաքի բնակիչները, օգտվելով առիթից, խնդրեցին մարզպետին՝ պետական աջակցությամբ հիմնանորոգման ծրագիր մտցնել նաեւ Վարդան Մամիկոնյան փողոցի հետ հատվող Թումանյան փողոցը: Մարզպետը դրականորեն արձագանքեց բնակիչների խնդրանքին, նշելով, որ Թումանյան փողոցի հիմնարոգումը կյանքի կկոչվի եկող տարվա ընթացքում: Մարտունու քաղաքապետարանում մարզպետը Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանի, Արծվանիստի գյուղապետ Սամվել Օհանյանի, 'Հայքմուղկոյուղի' ՓԲԸ Մարտունու տեղամասի պետ Գնել Կարապետյանի հետ քննարկեց ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգում խնդիրները: Ռաֆիկ Գրիգորյանը կատարեց նաեւ քաղաքացիների ընդունելություն՝ դրամական օգնություն հատկացնելով 3 դիմումատուի: Մարզպետին օգնության խնդրանքով դիմեցին նաեւ Մարտունի քաղաքի մի խումբ բնակիչներ, ովքեր փոխհատուցում են ակնկալելում այս ամռանը Մարտունու արտոտվայրում գայլերի հարձակմանը զոհ գնացած ոչխարների դիմաց: Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը նշեց, որ նման կարգի դեպքերը մարզում անցնում են երեք տասնյակից, որոնցից տուժած ընտանիքներին մարզպետարանը կփորձի հնարավորության դեպքում ու սահմաններում ինչ- որ կերպ օժանդակել: Ռաֆիկ Գրիգորյանն աշխատանքային այցով եղավ նաեւ Լիճքի մշակույթի տանը եւ Ծակքարի միջնակարգ դպրոցում: Լիճքի մշակույթի տանը մարզպետը դիտարկեց այն կիսատ մնացած աշխատանքները, որոնք պետք է առաջիկայում շարունակվեն 'Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի' միջոցներով, իսկ Ծակքարի միջնակարգ դպրոցում՝ ամռան ընթացքում իրականացված շինարարական աշխատանքները, որտեղ նկատված շինարարական թերությունները վերացնելու համար Ռաֆիկ Գրիգորյանը տվեց համապատասխան հանձնարարականներ: